ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1352-Ա « 09 » ապրիլի 2024 թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Նունե Մանուկյանի լ/ա Վահագն Հակոբյանի դիմումը Մաշտոցի պողոտայի հ.31/1 հասցեում գտնվող տաղավարի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 25.10.2023թ. հ.25102023-01-0298 վկայական) զբաղեցրած հողամասի համար կնքված վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

Մաշտոցի պողոտայի հ.31/1 հասցեում գտնվող տաղավարի կադաստրային արժեքը կազմում է 19,526,550 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ. 1023-Ն որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.50 -Ն որոշման հավելվածով.

1.Լիազորել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից Նունե Մանուկյանի հետ կնքել համաձայնագիր՝ Մաշտոցի պողոտայի հ.31/1 հասցեում գտնվող տաղավարի զբաղեցրած 54,6 քմ մակերեսով հողամասի համար 1998 թվականին կնքված վարձակալության հ.06/828 պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու և դրանում փոփոխություններ ու լրացում կատարելու մասին՝ ներառելով պայմանագրի հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1)պայմանագրում «Ռուբեն Հակոբյանը» բառերը փոխարինել «Նունե Մանուկյանը» բառերով.

2)պայմանագրի 19-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2027 թվականի մայիսի 1-ը:».

3)պայմանագրի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9.Հողամասի տարեկան վարձավճարը՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության՝ կազմում է 1 081 080 (մեկ միլիոն ութսունմեկ հազար ութսուն) ՀՀ դրամ (54,6 քմ x 330,000 ՀՀ դրամ x 2 %) x 3 (գործակից): Պայմանագրի կնքման պահին հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը 1քմ-ի համար կազմում է 330,000 ՀՀ դրամ:»:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ